

Հավելված

ԲԱՆԱԶԵՎ

Ազգային Փոքրամասնությունների Պաշտպանության Շրջանակային Կոնվենցիայի իրականացումը Հայաստանի կողմից

(Ընդունվել է Նախարարների Կոմիտեի կողմից 2007 թվականի փետվարի 7-ին, Նախարար պատգամավորների 986-րդ հանդիպման ժամանակ)

Համաձայն Նախարարների Կոմիտեի Ազգային Փոքրամասնությունների Պաշտպանության Շրջանակային Կոնվենցիայի 24-26-րդ հոդվածների,

Հաշվի առնելով Ազգային Փոքրամասնությունների Պաշտպանության Շրջանակային կոնվենցիայի 24-26-րդ հոդվածների հաստատած, 1997 թվականի Սեպտեմբերի 17-ին Նախարարների Կոմիտեի կողմից ընդունված մոնիտորինգի վերաբերյալ (97) 10- րդ Բանաձևը,

Հաշվի առնելով քվեարկության կանոնները՝ ընդունված (97) 10-րդ Բանաձևի շրջանակում,

Հաշվի առնելով, որ Հայաստանի կառավարությունը 2004 թվականի նոյեմբերի 24-ին ներկայացրել է Շրջանակային Կոնվենցիայի իրականացման պետական զեկույցը՝ համաձայն երկրորդ մոնիտորինգի,

Քննության առնելով Խորհրդատվական Կոմիտեի Հայաստանի վերաբերյալ երկրորդ զեկույցը՝ ընդունված 2006 թվականի մայիսի 12-ին, և Հայաստանի կառավարությունից 2006 թվականի հոկտեմբերի 24-ին ստացված գրավոր մեկնաբանությունները,

Հաշվի առնելով նաև այլ կառավարությունների դիտողությունները՝

Ընդունել հետևյալ եզրակացությունները Հայաստանի առնչությամբ՝

ա) դրական զարգացումներ

2002 թվականի մայիսի 16-ին Նախարարների Կոմիտեի կողմից ընդունված առաջին կարծիքի և 2003 թվականի հունվարի 15-ի Նախարարների Կոմիտեի բանաձևի հաստատումից հետո Հայաստանը ձեռնարկել է մի շարք միջոցներ՝ բարելավելու Շրջանակային Կոնվենցիայի իրականացումը: Սա ներառում է մի շարք ինստիտուցիոնալ և իրավական զարգացումներ, փոփոխություններ գործնական կիրառության մեջ այն ոլորտներում, որոնք ուղղակի առնչություն ունեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հետ:

Ինստիտուցիոնալ և իրավական զարգացումները ներառում են մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ստեղծումը: Մարդու իրավունքների առաջին պաշտպանը հատուկ ուշադրություն էր դարձնում խտրականության դեպքերին, ներառյալ էթնիկ ծագմամբ պայմանավորված խտրականության դեպքերը, և դա դարձել է կարևոր իրավական պաշտպանության և փոքրամասնությունների իրավունքների իրավազեկության աղբյուր:

Ավելին, 2004 թվականին ստեղծվեց կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը՝ ազգային փոքրամասնություններին առնչվող քաղաքականության ձևավորումը նախաձեռնելու և համակարգելու նպատակով: Ազգային փոքրամասնությունների խորհրդակցությամբ այս վարչության կողմից մշակվել է ‘ՀՀ ԱՅԼԷԹՆԻԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԷԹՆԻԿ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ’ օրենքի նախագիծը:

Նախաձեռնություններ են ձեռնարկվել՝ իրականացնելու ազգային ծրագրերում փոքրամասնությունների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ, հատկապես՝ մշակույթի ոլորտում: Ավելին, աջակցություն է ցուցաբերվում այն միջոցառումներին, որոնց նպատակն է նպաստել ազգային փոքրամասնությունների մշակույթի, լեզվի և ավանդույթների զարգացմանը: Վարչական իշխանությունների հետ առնչվելիս փոքրամասնությունների լեզվի օգտագործման իրավական հիմքը հաստատվել է 2004 թվականին:

Կրթության բնագավառում քայլեր են ձեռնարկվել՝ բավարարելու ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կարիքները: Իշխանությունները նաև քայլեր են ձեռնարկել համոզված լինելու համար, որ ընթացիկ ‘օպտիմալիզացիայի’ գործընթացը չի քայքայի փոքրամասնությունների լեզուների ուսուցումը:

Իշխանությունները շարունակում են աջակցել ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդին և ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությանը, որոնք ջանքեր են

գործադրում շարունակելու աշխատանքային հարաբերությունները ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ:

բ) մտահոգող խնդիրներ

Չնայած նրան, որ Հայաստանը զարգացրել է ազգային փոքրամասնությունների պաշտպանության իրավական և ինստիտուցիոնալ շրջանակները, այնուամենայնիվ՝ ֆինանսական խնդիրները ազդում են ազգային փոքրամասնությունների պաշտպանությանը առնչվող շատ ոլորտների, իշխանությունների ձեռնարկած միջոցների իրականացման արդյունավետության վրա: Հետագա քայլերը պետք է ուղղված լինեն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին հավասար հնարավորություններ ապահովելուն: Ազգային փոքրամասնություններին ցուցաբերվող պետական աջակցության անհավասարակշռությունը ևս պետք է քննության առնվի:

Հայաստանում շարունակում է գերակշռել ընդհանուր առմամբ հանդուրժողականության մթնոլորտը: Այնուամենայնիվ՝ անհրաժեշտ է, որ իշխանությունները աչալուրջ լինեն խտրականության այն դեպքերի նկատմամբ, որոնք պայմանավորված են էթնիկ ծագմամբ և ուղղված են հատկապես եզրի փոքրամասնության ներկայացուցիչների դեմ: Ավելի մանրամասն տեղեկությունները՝ ներառյալ վիճակագրական տվյալները, կօգնեն վիճակը բարելավելուն ուղղված միջոցների ձևավորմանը:

Փոքրամասնությունների և փոքրամասնությունների լեզուների առկայությունը լրատվական միջոցներում մնում են սահմանափակ, հանրային ռադիոյում և հեռուստատեսությունում փոքրամասնությունների լեզուների օգտագործման իրավական սահմանափակումները մնում են:

Չնայած կրթության միջոցով փոքրամասնությունների լեզուների պաշտպանությանն ուղղված ձեռնարկված միջոցներին, փոքրամասնությունների լեզուների ուսուցման վերաբերյալ որոշ թերությունների արձանագրումները շարունակվում են: Այս թերությունները ներառում են նաև որակյալ ուսուցիչների և փոքրամասնությունների լեզուներով կրթություն ստանալու համար դասագրքերի անբավարար լինելը, նախադպրոցական կրթության և որոշ փոքրամասնությունների համար աշակերտների բացակայությունների մակարդակը, մասնավորապես երիտասարդ կանանց և աղջիկների շրջանում: Ավելին, Հայաստանում աճող ուշադրությունը կրթության նկատմամբ պետք է հաշվի առնի ազգային փոքրամասնությունների կարծիքը, ներառյալ նրանց, ովքեր ռուսերենը

համարում են որպես գերադասելի փոքրամասնության լեզու և նախընտրում են ուսերենը, որպես իրենց երեխաների կրթության լեզու:

Շարունակում է սահմանփակված մնալ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մասնակցությունը հանրային հարաբերություններին, հատկապես ազգային մակարդակով:

“ԱՅԼԷԹՆԻԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ և ԷԹՆԻԿ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ” ՀՀ օրենքի նախագիծը արժանացել է քննադատության ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից: Օրենքի այն տեսակետները, որոնք արժանացել են քննադատության, ներառում են գիտակցված ոտնձգություն՝ սահմանափակելու փոքրամասնությունների երկխոսության միջոցները:

Լեռնային Ղարաբաղի բախումից առաջացած խնդիրները շարունակում են խոչընդոտել անդրսահմանային համագործակցությանը:

Հայաստանի առնչությամբ ընդունել հետևյալ հանձնարարականները՝

Ի լրացումն Խորհրդատվական Կոմիտեի կարծիքի առաջին և երկրորդ գլուխներում ներկայացված մանրամասն հանձնարարականների իրկանացմանն ուղղված միջոցների, իշխանություններին կոչ է արվում ձեռնարկել հետևյալ քայլերը՝ բարելավելու Շրջանակային Կոնվենցիայի կիրառումը.

o հանրության, քաղաքական գործիչների և լրատվամիջոցների շրջանակում ավելացնել իրազեկումը ազգային փոքրամասնությունների վերաբերյալ,

o միջոցներ գտնել բարձրացնելու փոքրամասնությունների մասնակցությունը լրատվամիջոցներին և վերացնել իրավական խոչընդոտները հանրային ռադիոյով և հեռուստատեսությանը փոքրամասնությունների լեզուներով հեռարձակումների համար,

o շարունակել աջակցել ազգային փոքրամասնությունների հետ խորհրդակցական մեխանիզմներին՝ հաշվի առնելով նրանց բազմազանությունը,

o ավելացնել ջանքերը՝ ապահովելու բավարար և որակավորված ուսուցիչների և դասագրքերի մատչելիությունը փոքրամասնությունների լեզուների ուսուցման համար, միջոցներ ձեռնարկել՝ ստեղծելու նախադպրոցական կրթություն, հատկապես այն վայրերում, որտեղ ազգային փոքրամասնություններն ապրում են զգալի թվով, ավելի շատ լուծումներ

կիրառել՝ նվազեցնելու բացակայությունների մակարդակը, որ ազդում է որոշ ազգային փոքրամասնությունների պատկանող աշակերտների վրա,

o շարունակել հնարավորություններ տրամադրել ազգային փոքրամասնությունների պատկանող այն անձանց, ովքեր նախընտրում են ռուսերեն լեզվով կրթությունը,

o ստանձնել ավելի սիստեմատիկ վերահսկում Մարդու Իրավունքների Պաշտպանի գրասենյակի ներգրավմամբ խտրականության այն միջադեպերի նկատմամբ, որոնք պայմանավորված են էթնիկ ծագմամբ,

o երաշխավորել, որ ազգային փոքրամասնությունների վերաբերյալ որևէ օրենք ամբողջությամբ համապատասխանում է Շրջանակային Կոնվենցիայի դրույթներին:

3. Համաձայն (97) 10 Բանաձևի Հայաստանի կառավարությանը կոչ է արվում՝

ա. շարունակել առաջընթացի երկխոսությունը Խորհրդատվական Կոմիտեի հետ;

բ. Խորհրդատվական Կոմիտեին կանոնավոր կերպով տեղեկացված պահել վերոհիշյալ 1-ին և 2-րդ բաժինների եզրակացությունների և հանձնարարականների համաձայն ձեռնարկված միջոցների վերաբերյալ: